ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2019 թվականի №26Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԱՄԱՆՈՐ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում «Սյունիքյան Ամանոր» միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Սյունիքյան Ամանոր» միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5-րդ հավելվածների:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

12/19/2019

X

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

Подписано. BABAYAN NAREK 1505920434

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. Պողոսյան

2019թ. դեկտեմբերի 19
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ դեկտեմբերի 19-ի
N 126-Ա որոշման

ԿԱԶՄ

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

1. Ն. Բաբայան	ՀՀՍյունիքի փոխմարզպետ
2. Գ.Թադևոսյան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական
3. Ն.Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
4. Մ.Գանդալյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
5. Ս.Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
6. Ա.Սիմոնյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի ժամանակավոր պաշտոնակատար
7. Ա.Շահնազարյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ
8. Ա.Ոսկանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
9.Թ.Կարապետյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
10. Վ. Արզումանյան	«Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն:

19 12 2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ Գ.Թադևոսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. դեկտեմբերի 19-ի
N 696Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

Միջոցառման նպատակն է՝

Խթանել, ամրապնդել և զարգացնել ազգային ծեսերի ու ծիսակատարությունների զարգացումն ու տարածումը, մարզի հասարակությանը ներկայացնել մարզի լավագույն երաժշտական, պարային խմբերին, անհատ կատարողներին ու ստեղծագործողներին, մարզի մշակութային գործիչներին:

1. «Սյունիքյան Ամանոր» միջոցառման շրջանակներում Ձմեռ Պապի և Ձյունանուշի այցը Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր:
2. Ձմեռ պապի և Ձյունանուշի այց մարզի ծննդատներ՝ 2020թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին:
3. Տոնական միջոցառում Կապանի «Արծվաբույն» տարեցների կենտրոնում:
4. Թատերական ներկայացում՝ Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետ. դրամատիկական թատրոն «Գրինչի ամանորյա արկածները», Տաթև համայնքում:
5. Ամանորի համերգային ելույթներ մարզում տեղակայված երկու N զորամասերում:
6. Սուրբ պատարագ, մոմավառություն, ծաղկադրում Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին:
7. «Շնորհավոր Նոր Տարի» տոնական հանդիպում և հյուրասիրություն:
8. Թատերական ներկայացում՝ «Տիկին Բուքը», Կապանի Ա..Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն ՊՈԱԿ /Մեղրի համայնքում/:

19.12.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано. TADEVOSYAN GRIGOR 19095001

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. դեկտեմբերի 19-ի
N 46Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

Նպատակը՝

Խթանել, ամրապնդել և զարգացնել ազգային ծեսերի ու ծիսակատարությունների զարգացումն ու տարածումը, մարզի հասարակությանը ներկայացնել մարզի լավագույն երաժշտական, պարային խմբերին, անհատ կատարողներին ու ստեղծագործողներին, մարզի մշակութային գործիչներին:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը.

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Միջոցառման ղեկավարումը իրականացնում է միջոցառման կազմակերպման նպատակով ստեղծված կազմակերպական կոմիտեն և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Միջոցառման ժամկետը և վայրը.

Միջոցառումը անց է կացվելու 2019թ. դեկտեմբեր և 2020թ.հունվար ամիսներին՝ մարզի համայնքներում:

Միջոցառման ընթացքը.

«Սյունիքյան Ամանոր» միջոցառումը կազմակերպվում է ըստ ծրագրի՝ հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ժամանակացույցը և առանձին միջոցառումների անցկացման վայրը:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի հետ:

Միջոցառման ծախսերը.

Տոնակատարության անցկացման հետ կապված ծախսերը /տրանսպորտի, նվերների, հուշանվերների, սննդի, սպասարկող անձնակազմի և այլն/ հոգում են միջոցառման կազմակերպիչները՝ համաձայն հաստատված նախահաշվի:

19.12.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано. TADEVOSYAN GRIGOR 19095901

ՀՀ Սյունիքի մարզպետարանի

գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. դեկտեմբերի 19-ի
N126Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	**192.0**
2	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216	**70.0**
3	Հանրային սննդի ծառայություններ	4236	**431.0**
4	Նվերներ	4237	**682.0**
5	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	**277.0**
6	Այլ մասնագիտական ծառայություններ	4241	**308.0**
7	Գրասենյակային պիտույքներ	4261	**40.0**
	Ընդամենը		**2.000.0**

19.12.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано. TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան

Հավելված 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ.դեկտեմբերի 19-ի
N 26Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

հ/հ	Ժամանակը	Միջոցառման անվանումը	Վայրը
1	20.12.019թ	Տոնական այցելություն և ամանորյա նվերներ Կապանի թիվ 3 հատուկ կրթականհամալիր՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ուրախ ժամանց	ք.Կապան
2	22.12.2019թ	Համերգային ելույթ մարզում տեղակայված N զորամասում	ՀՀ Սյունիքի մարզ N զորամասեր
3	27.12.2019թ	«Շնորհավոր Նոր Տարի» տոնական հանդիպում և հյուրասիրություն	ք.Կապան
4	28.12.2019թ	Թատերական ներկայացում «Գրինչի ամանորյա արկածները»	Տաթև համայնք
5	29.12.2019թ	Համերգային ելույթ մարզում տեղակայված N զորամասում	ՀՀ Սյունիքի մարզ Մեղրի համայնք N զորամասեր
6	30.12.2019թ.	Տոնական միջոցառում Կապանի «Արծվաբույն» տարեցների կենտրոնում	ք.Կապան
7	2.01.2020թ.	Ձմեռ պապի և Ձյունանուշի այցը 2020թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին	Մարզի համայնքներ
8	07.01.2019թ	Սուրբ պատարագ, մոմավառություն, ծաղկադրում Արցախի ազատագրման և ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների շիրիմներին	Կապան համայնք Բաղաբուրջ հուշահամալիր
9	10.01.2020թ	Թատերական ներկայացում «Տիկին Բուքը»	ՀՀ Սյունիքի մարզ Մեղրի համայնք

19.12.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ Գ.Թադևոսյան